Կարծիք

Արթուր Սեյրանի Նահապետյանի «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեկնածուական թեզի վերաբերյալ

5-ը մայիսի 2023 թ.

Արթուր Սեյրանի Նահապետյանի «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեկնածուական թեզի արդիականության առնչությամբ նկատառումներ չունենք: Այն նվիրված է ներկայումս ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանն առնչվող առանցքային հիմնախնդիրների գիտագործնական հարթությամբ նկատելի արդիականություն ձեռք բերած հարցադրումների համակողմանի հետազոտությանը:

Հեղինակի նկատառումները թեմայի արդիականության առնչությամբ ևս բավարար չափով հիմնավորված են: Այսպես, անդրադառնալով նշված հարցադրումների հետազոտության ընդհանուր վիճակին, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավական հիմքերի էական փոփոխություններին, հեղինակը նկատել է. «Այս փոփոխություններն առաջ են բերում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, դրա երաշխավորումը, այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը նորովի դիտարկելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով նաև այս ոլորտում այլ երկրների և միջազգային կազմակերպությունների կուտակած փորձը և լավագույն պրակտիկան»:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է, դրանում չկան այլոց մտքերը,

դատողությունները յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական և տարընթերցումների տեղիք չտվող լեզվաոճով: Հեղինակը դրսևորել է այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքում, պատշաճ բարեվարքություն: Աշխատանքը առանձնանում է ձևավորման պահանջների պահպանման հետևողականությամբ, ինչպես նաև վրիպակների և խմբագրական այլ թերությունների գրեթե իսպառ բացակայությամբ:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող եզրահանգումների և դրույթների ինքնատիպությունն ու ներքին համակարգային կապը: Իրենց ամբողջության մեջ վերջիններս կարող են հիմնարար նշանակություն ունենալ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության տեսական ու օրենսդրական հիմքերի, ինչպես նաև իրավակիրառ ոլորտում արդյունավետության համալիր բարելավման տեսանկյունից:

Հետազոտության համար ընտրվել են, հիմնականում անհրաժեշտ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր և այլ իրավական փաստաթղթեր, թեպետ՝ հետազոտությունն առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը նույնչափ համարժեք անդրադառնար նաև հայրենական մասնագիտական և իրավակիրառ նյութերին:

Կարծում ենք նաև, որ հեղինակի կողմից ընտրվել է թեզի հիմնավորված կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել, նախ, անդրադառնալու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության առավել ընդհանուր հարցադրումներին, այնուհետև հետազոտված նյութի վերլուծության արդյունքերով բացահայտելու առավել մասնավոր հարցադրումների պատասխաններ:

Աշխատանքը զերծ չէ առանձին թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Հեղինակը ներկայացրել է ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բավականին ինքնատիպ բնորոշում, ինչպես նաև վերջինիս երաշխավորման կտրվածքով պետության պատասխանատվության շրջանակի վերաբերյալ որոշակի ինքնուրույն դատողություններ, ինչն ինքին համապատասխանում է գիտականության չափանիշներին:

Չանդրադառնալով բովանդակային տեսանկյունից հիշյալ բաղադրատարրերի իրավաչափությանը (դրանք հեղինակի ինքնուրույն դատողություններն են, որոնք ուղեկցվել են որոշակի հիմնավորումներով), մեր կարծիքով, առանձին դեպքերում, չեն ընտրվել դրանք բնորոշելու համարժեք եզրույթներ: Այսպես, պաշտպանության առաջադրված գրեթե բոլոր կետերում անդրադարձ է արվել, այսպես կոչված՝ «իրավազորությունների ամբողջությանը», վերջինս ներկայացնելով իբրև հնարավոր վարքագծի կանոնների ամբողջություն: Այս համատեքստում ունենք հետևյալ նկատառումները՝ ա) նախ, իրավազորությունը հավաքական գոյական է, այն ներառում է հնարավոր վարքագծի բոլոր կանոնները, ուստի կարող էր ներկայացվել միայն եզակի թվով, բ) քննարկվող դեպքում, իրավազորությունը բովանդակային կտրվածքով ներառում է բացառապես տվյալ իրավունքի բաղադրատարրերը, իսկ ինչ վերաբերում է իրավունքի երաշխավորման տեսանկյունից «պետությանը պահանջներ» ներկայացնելուն, ապա նշված իրավազորության բաղադրատարրերը ամրագրված են սահմանադրական այլ իրավունքներով՝ պատշաճ վարչարարության (50-րդ հոդված), վնասի հատուցման (62-րդ հոդված) իրավունքներ և այլն: Ընդ որում, հիմնական իրավունքները հարգելու՝ հանրային իշխանության համընդհանուր պարտականությունը միանշանակ ամրագրված է Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր իրավունքի իրացման համատեքստում առաջնայինը ոչ թե պետությանը պահանջ ներկայացնելն է, այլ Սահմանադրության ուժով պետության պարտականությունը ապահովելը: Բնորոշ է այն, որ հեղինակը անդրադարձել է այն հեղինակների աշխատություններին և իրավունքի աղբյուրներին, որոնցում հիշյալ իրավունքը բնորոշելիս, ևս ընդգծվել են ոչ թե պահանջներ ներկայացնելու, այլ այդ իրավունքի նկատմամբ ոտնձգությունները կանխելու և իրավախախտումների համար պատժելու բաղադրիչները: Ինչևէ, աշխատանքն առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը համարժեք անդրադառնար այդ բաղադրիչները քննարկման առարկա իրավունքի մեջ ներառելու տեսակետի հիմնավորմանը:

2. Կարծում ենք, պաշտպանության ներկայացվող դրույթները կարելի էր այնպես խմբագրել, այդ թվում՝ ընդհանրացնել և խմբավորել, որպեսզի բացառվեր անհարկի կրկնությունը: Մասնավորապես, հեղինակը փորձել է առանձին

անդրադառնալ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին, ինչպես նաև դրա բովանդակությունը կազմող տարրերին և այդ իրավունքը հարգելու հանրային իշխանության պարտականությանը, ինչի արդյունքում ակամա տեղ է գտել շարադրանքի որոշակի կրկնություն: Իհարկե, բովանդակային կտրվածքով դրանք տարբեր են, սակայն անհարկի կրկնությունից խուսափելու համար կարելի էր, օրինակ՝ ոչ թե յուրաքանչյուր դեպքում թվարկել իրավունքի բաղադրիչները, այլ հղում անել արդեն իսկ թվարկվածների վրա:

3. Կարծում ենք, աշխատանքն ավելի պահանջված ու արդիական կլիներ, եթե հեղինակը ոչ միայն հանգամանորեն անդրադառնար արտասահմանյան փորձին, ինչպես նաև այդ առնչությամբ ՄԻԵԴ-ի դիրքորոշումներին, այլև հայրենական իրավակիրառ և իրավաստեղծ փորձին, հատկապես՝ «Կովիդ-19» համավարակի համատեքստում: Մասնավորապես, խորհրդարանում լուրջ քննարկումներ էին ընթանում այն հարցի շուրջ, թե որքանո՞վ է իրավաչափ նախարարի հրամանով ֆիզիկական անձեռնմխելիության սահմանափակումներ նախատեսելը, մինչդեռ՝ գործադիր իշխանությունը հակված էր այն տեսակետին, թե իր նախաձեռնությամբ կիրառված սահմանափակումները որևէ առնչություն չունեին ֆիզիկական անձեռնմխելիության հետ: Հարցը միայն մասնակի քննարկման առարկա դարձավ Սահմանադրական դատարանում, մասնավորապես՝ հիմնական անդրադարձը վերաբերում էր սեփականության իրավունքի խաթարմանը, այսինքն՝ անհիմն համարվեց սեփական միջոցներով սահմանված պարտավորությունները կատարելը, մինչդեռ՝ խնդիրն առավել խորքային էր և համալիր գիտական հետազոտության կարիքը նկատելի էր:

Տվյալ դեպքում, ՄԻԵԴ-ը ևս արտահայտել է դիրքորոշում այն կտրվածքով, թե ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կոնկրետ ինչպիսի՞ նորմատիվ ակտով կարող է իրականացվել և ինչպիսի՞ սահմանափակումներ կարող են նախատեսվել: Այս տեսանկյունից քննարկումը չէր կարող սահմանափակվել միայն այն հարթությամբ, որ գործադիր իշխանության մարմինը նախատեսել է ճիշտ այնպիսի սահմանափակումներ, որոնք նախատեսված են ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերով: Ըստ էության, դեռևս անպատասխան են մնացել հետևյալ լրջագույն հարցը՝ արդյո՞ք ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի հետ

աղերսներ չունեն արտակարգ իրավիճակներում այնպիսի սանիտարական նորմեր սահմանելը, որոնք լրացուցիչ սահմանափակումներ են նախատեսում անձի այլ իրավունքների իրացման տեսանկյունից:

Մեկ այլ վիճահարույց հարցադրում՝ կապված այն իրավիճակի հետ, երբ պացիենտը ի վճակի չի լինում արտահայտելու իր կամքը, որպիսի պարագայում թույլատրվում է բժշկական միջամտությունը: Գործնականում, կարծում եմ, այս իրավիճակը՝ հստակ տեսաիրավական չափորոշիչների բացակայության արդյունքում, չունի միատեսակ ընկալում, հատկապես՝ հացադուլի դեպքում: Մասնավորապես, նշված դեպքում անձը կարող է հայտնվել այնպիսի տկար վիճակում, որ դե ֆակտո զրկված լինի լիարժեք արտահայտելու իր կամքը, մինչդեռ՝ զուտ ձևական նկատառումներով արգելվում է որևէ բժշկական միջամտությունը, այդ թվում՝ սննդային համակարգի միացումը և այլն:

4. Թեզում կան որոշ ոչ էական վրիպակներ, օրինակ՝ գրականության ցանկում որպես օրենսդրական աղբյուր նշված է միայն 2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը, մինչդեռ՝ աշխատանքի տեքստում արտացոլված է ինչպես 2021 թ. մայիսի 5-ին ընդունված և ներկայումս գործող ՀՀ քրեական օրենսգիրքը, այնպես էլ 2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ արձանագրված նկատառումները մեծամասամբ տեսական բանավեճի կամ ձևավորման ոչ էական պահանջների անտեսման հարթության վրա են, ուստի դրանք չեն կարող հիմք լինել պաշտպանությունը չերաշխավորելու համար:

Այսպիսով, ամփոփելով Արթուր Սեյրանի Նահապետյանի «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեկնածուական թեզի վերաբերյալ մեր նկատառումները, կարող ենք արձանագրել, որ այն համապատասխանում է սահմանված պահանջներին և հեղինակն արժանի է, որպեսզի շնորհվի հայցվող

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Գևորգ Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ